ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 09/18

20.08.2018թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը **(այսուհետ՝ Կենտրոն)**,

քննարկելով ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Հայաստանի Հանրապետության Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դիմող) 2018թ. հունիսի 18-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դիմողի հիմնավորումները մասնավորապես հանգում են հետևյալին.

Դիմողը գտնում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրության 60-րդ, 78-րդ հոդվածներին: Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմը հետապնդում է հողի հարկը անձի կողմից ժամանակին և պատշաճ վճարելու նպատակ, սակայն այդ նորմի հետապնդած նպատակին հասնելու համար ընտրված պատասխանատվության միջոցը պիտանի և անհրաժեշտ չէ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված նպատակին հասնելու համար:

Դիմողի դիրքորոշմամբ՝ հողի հարկը չվճարելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսվել է երկու հետևանք. առաջին՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման վերաբերյալ վարույթ, որն ի վերջո ավարտվում է գումարի բռնագանձմամբ, և երկրորդ՝

հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի հարկադիր կարգով դադարեցում: Ընդ որում, ըստ Դիմողի՝ օրենսդրորեն սահմանված չէ որևէ չափանիշ, թե որ սեփականատիրոջ նկատմամբ պետք է կիրառել առաջին հետևանքը, որի նկատմամբ՝ երկրորդը:

Դիմողը գտնում է, որ հողի հարկը չվճարելու պատճառաբունությամբ սեփականությունից զրկումը պիտանի և անհրաժեշտ չէ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված նպատակին հասնելու համար, քանի որ այդ նպատակին հասնելու համար անձի սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտության տեսանկյունից, առկա է առավել բարենպաստ միջոց, այն է՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման վերաբերյալ վարույթը:

Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով առաջնորդվելու պարագայում լիազորված մարմինը պարտավոր է հողի հարկը գանձելու նպատակով ընտրել անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման վերաբերյալ վարույթ հարուցելու հնարավոր իրավաչափ լուծումը և ոչ թե սեփականությունից զրկումը: Մինչդեռ վիճարկվող նորմի առկայության պայմաններում պարարտ դաշտ է ստեղծվում կամայականության արգելքի սկզբունքը խախտելու համար:

Բացի այդ, ըստ Դիմողի՝ հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելու և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելու պատճառաբանությամբ սեփականազրկումը չի կարող արդարացված համարվել, քանի որ այն աղերս չունի հանրության շահի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ, այստեղ առկա չէ արդար հավասարակշռություն հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև, անձի կողմից հողի հարկի չվճարման դեպքում հասարակության ընդհանուր որևէ շահ չի խախտվում ի տարբերություն ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի մնացած այլ կետերով նախատեսված հիմքերի, որոնցով ակնհայտ է սեփականազրկման արդարացված համարվելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է որոշել ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետի սահմանադրականությունը:

Սույն գործով ՀՀ սահմանադրական դատարանում գործի քննությունը նշանակված է 2018թ. սեպտեմբերի 18-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն գործով վեճի առարկա իրավադրույթը քննության առարկա պետք է դարձվի սեփականության իրավունքի և սեփականությունից զրկելու սահմանադրական մոտեցումների տեսանկյունից:

Սեփականության սահմանադրական իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության (2015 թ. խմբագրությամբ) 60-րդ հոդվածում:

Հոդված 60. Սեփականության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Սեփականության իրավունքի տարրերը հանդիսացող տիրապետման, օգտագործման, տնօրինման քաղաքացիաիրավական իրավազորությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում, համաձայն որի՝

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված

հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Այլ կերպ կարելի է ասել, որ տնօրինման իրավունքը սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու հնարավորությունն է:

Սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանն իր մի շարք որոշումներում անդադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Մասնավորապես, իր 18.03.2008թ. թիվ ՍԴՈ-741 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ **ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝** *«Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»*: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1. հոդվածներ), այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

2008թ. մարտի 18-ի թիվ ՍԴՈ-741 որոշման մեջ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը նաև նշել է. *«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:*

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման մեջ արձանագրել է. «*Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավազորությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով* ***սեփականատիրոջ հայեցողությունը:*** *Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ*

սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, ***քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն»*:**

«**Տնօրինման իրավազորությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից օրենքով նախատեսված շրջանակներում ու կարգով գույքի նկատմամբ գործողություններ կատարելու կամ վերջինից ձեռնպահ մնալու միջոցով իր գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու իրավունք:** Դա ոչ այլ ինչ է, քան հայեցողություն կամ, այլ կերպ՝ գույքի ճակատագրի հանդեպ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասում նախանշված շրջանակներում և օրենքով սահմանված պայմաններում ու կարգով **ինքնավար կամք դրսևորելու իրավունք:** Սակայն այդ կամքի ինքնավարությունը չի կարող անսահման լինել և չի կարող հակասել օրենքին, խախտել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը»[1]:

* * *

ՀՀ հողային օրենսգրքի վիճարկվող դրույթի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 102. Հողամասի նկատմամբ իրավունքների հարկադիր դադարման հիմքերը.

Հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարում են դատական կարգով, հետևյալ հիմքերով՝

5) հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելը և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելը…:

Վեճի առարկա դրույթի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար անհրաժեշտ է անդրադառնալ **սեփականության սահմանադրական իրավունքի սահմանափակման** հնարավորությանը:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ ՀՀ սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 43-րդ հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների

[1] ՀՀ սահմանադրական դատարանի 24.02.2012թ. թիվ ՍԴՈ-1009 որոշում:

սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այն կարող է, նախ՝ իրականացվել օրենքով նախատեսված դեպքերում բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Երկրորդ՝ «սեփականության օտարման» միջոցով, որը «սեփականության զրկումից» էապես տարբեր այլ ինստիտուտ է և պետք է իրականացվի Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքերով[1]:

Քննարկվող գործի հանգամանքներով հատկապես անհրաժեշտ է անդրադառնալ **«սեփականության իրավունքից զրկում»** հասկացությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630 որոշմամբ «սեփականության իրավունքից զրկումը» դիտում է որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն:

Սեփականության իրավունքից զրկելու բովանդակությունն առավել ամբողջական կերպով մեկնաբանվում է **ՀՀ սահմանադրական դատարանի 13.07.2010 թվականի ՍԴՈ-903 որոշման մեջ, ըստ որի՝** *«ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է **սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանք**՝*

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականազրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար»:

Սահմանադրական դատարանն առանձնացրել է սեփականությունից զրկելու՝ որպես անձի **պատասխանատվությունից բխող հարկադիր գործողութանը** բնորոշ հետևյալ հիմնական պարտադիր տարրերը՝

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի **անհատույց դադարեցում,**

[1] ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630 որոշում:

- սեփականությունից զրկումը կիրառվում է **որպես պատասխանատվության միջոց,**

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավազորությունների միաժամանակյա և **լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման**[1]**:**

Այսպիսով՝ «սեփականության իրավունքից զրկումն» իրականացվում է դատարանի միջոցով, անհատույց կերպով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Առանց սեփականությունից դատական կարգով զրկելու սահմանադրական պահանջի ապահովման՝ որպես անձի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցի, անձի գույքի նկատմամբ ցանկացած գործողություն պետք է դիտել որպես նրա սեփականության իրավունքի խախտում:

Վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելիս՝ անհրաժեշտ է դրա բովանդակությունը համադրել սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ վերոնշյալ հիմնական պարտադիր տարրերի հետ:

Այսպես, ըստ վիճարկվող դրույթի՝ հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելու և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարել դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի դադարեցում **դատական կարգով:** Ընդ որում, վիճարկվող դրույթը չի նախատեսում սեփականության իրավունքի դադարեցումը **հատուցմամբ:** Այս մասով դրույթի իրավական որոշակիությունը ևս խնդրահարույց է:

Արդյո՞ք սեփականությունից զրկումը քննարկվող դեպքում կիրառվում է **որպես պատասխանատվության միջոց:** Հարկ է նկատել, որ վիճարկվող դրույթի նպատակը հողի սեփականատիրոջը դրա հարկը վճարելու պարտականության կատարման ապահովմանն է ուղղված, իսկ հարկային պարտավորությունն իր բովանդակությամբ նույնը չէ, ինչ որ պատասխանատվությունը: Ակնհայտ է, որ վճարկվող դրույթով սահմանված հարկային պարտավորության դիմաց սեփականության իրավունքի դադարեցումը հանդես չի գալիս որպես պատասխանատվության միջոց, չնայած որ իրականացվում է անձի կամքին հակառակ՝ որպես հարկադիր գործողություն (այսինքն՝ պետության կողմից կիրառվող հարկադրանքի միջոց է): **Ասվածը նշանակում է, որ վիճարկվող դրույթում բացակայում է սեփականության իրավունքի դադարեցումը որպես պատասխանատվության միջոց կիրառելու տարրը:**

Սեփականությունից զրկելը դիտվում է որպես պատասխանատվության միջոց, որն առաջացնում է անբարենպաստ հետևանքներ սեփականատեր անձի համար

[1] ՀՀ սահմանադրական դատարանի 13.07.2010թ. թիվ ՍԴՈ-903 որոշում:

օրենքի պահանջներին չհամապատասխանող վարքագիծ դրսևորելու պարագայում, իսկ խնդրո առարկա իրավակարգավորումը պատասխանատվության միջոց չէ, այլ միտված է ապահովելու անձի կողմից օրենքով նախատեսված պարտավորության կատարումը[1]:

Ինչպես սեփականությունից զրկելու դեպքում, այնպես էլ վիճարկվողի դրույթով սահմանված իրավակարգավորման պարագայում տեղի է ունենում հողի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավազորությունների միաժամանակյա և լիակատար դադարում՝ **առանց շարունակականության երաշխավորման:**

Այսպիսով, այնքանով, որքանով վիճարկվող դրույթում բացակայում է սեփականության իրավունքի դադարեցումը որպես պատասխանատվության միջոց կիրառելու տարրը, քննարկվող ինստիտուտը չի կարող դիտարկվել սեփականությունից զրկելու սահմանադրական ինստիտուտի լույսի ներքո:

Վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելիս հարկ է անդրադառնալ դրա իրավական որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին, որոնք նախատեսված են ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներով:

Հոդված 78. Համաչափության սկզբունք

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Վիճարկվող դրույթը նախ չի կարգավորում այն հարցը, թե արդյոք քննարկվող դեպքում հողի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցվում է հատուցմա՞մբ, թե անհատույց: Եթե խոսքը անհատույց դադարեցման մասին է, ապա ստացվում է, որ

[1] ՀՀ սահմանադրական դատարանի 03.06.2014թ. թիվ ՍԴՈ-1153 որոշում:

մի քանի անգամ ավելի արժեք ունեցող հողամասը կարող է սեփականատիրոջից վերցվել մի քանի անգամ պակաս հարկային պարտավորության դիմաց, որի պարագայում խախտվում է համաչափության սկզբունքը: Եթե խոսքը հատուցմամբ դադարեցման մասին է, ապա այդ դեպքում ո՞րն է վիճարկվող ինստիտուտի և անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման վերաբերյալ վարույթի և անձի պարտավորություններով իր գույքի վրա բռնագանձում տարածելու ինստիտուտների միաժամանակյա սահմանման նպատակը, որո՞նք են այն պայմանները և չափանիշները, որոնք կանխորոշում են դրանցից մեկի կամ մյուսի կիրառման հնարավորությունը, անհրաժեշտությունը կամ նպատակահարարությունը: Այդ դեպքում, սահմանելով քննարկվող իրավիճակում սեփականության իրավունքի դադարեցումը դատական կարգով, ի՞նչ չափանիշներով դատարանը պետք է որոշի սեփականության իրավունքի դադարեցման հարցը յուրաքանչյուր գործով, ի՞նչ չափանիշներ և պայմաններ պետք է հաշվի առնի հողի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցումը թույլատրելու համար:

Այս համատեքստում անհրաժեշտ է մեջբերել նաև խնդրո առարկա հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանի 2013թ. հունվարի 30-ի ՍԴՈ-1073 որոշման համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը միանշանակ սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, **բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:** Շեշտադրվում է նաև, որ նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

ՀՀ սահմանադրական դատարանի 2015թ. ապրիլի 28-ի ՍԴՈ-1203 որոշման համաձայն՝ «Հարկը պետության գոյատևման անհրաժեշտ պայման է, և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այդ պարտականությունը վերաբերում է բոլոր հարկատուներին:

Հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների համար կամավորության հենքի վրա սահմանադրաիրավական պարտավորությունների չկատարումն ինքնին հանգեցնում է

պետության կողմից դրանց՝ իրավական հարկադրանքի միջոցով գանձմանը, որը չի կարող դիտարկվել որպես սեփականությունից զրկում»:

Վերը շարադրված դիրքորոշումների վերլուծությունից ելնելով՝ Կենտրոնի դիրքորոշմամբ ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետը խախտում է անձի սեփականության իրավունքի բաղադրատարրեր հանդիսացող տիրապետման, օգտագործման և հատկապես տնօրինման իրավազորությունները: Վիճարկվող օրենքի դրույթն անմիջականորեն միջամտում է անձի սեփականության գույքային իրավունքի իրականացմանը, խաթարում վերջինիս սեփականության անձեռնմխելիությունը: Նման միջամտությունն անձին զրկում է իր գույքը սեփական հայեցողությամբ, ազատ կամաարտահայտությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու սահմանադրական իրավազորություններից, քանի որ սեփականատիրոջը պատկանող գույքն իր կամքից անկախ կարող է դուրս գալ վերջինիս տիրապետումից՝ զրկելով այն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունից:

Բացի այդ, վերը նշված հիմնավորումներով հողի նկատմամբ սեփականության իրավունքի հարկադիր դադարեցումը՝ որպես հարկ վճարելուն հարկադրելու նպատակին հասնելու միջոց, որոշակի և համաչափ չէ և անմիջականորեն հանգեցնում է անձի սեփականության սահմանադրական իրավունքի խախտման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:

Համակարգող՝ Լյուդվիկ Դավթյան